

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԱԿՑՈՒԹՅԱՆ

Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի կառավարությունը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանը, այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով 1997թ-ի օգոստոսի 29-ի Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև բարեկամության, համագործակցության և փոխօգնության պայմանագրի դրույթներով, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության կառավարությունների կողմից Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների և Հայաստանի Հանրապետության մարզերի միջև համագործակցության սկզբունքների մասին 2001թվականի սեպտեմբերի 15-ին ստորագրված Համաձայնագրի՝ հիմնվելով իրավահավասարության և փոխշահավետության սկզբունքների հիման վրա բազմակողմանի շփումների զարգացման գործում փոխադարձ շահագրգռվածության վրա, ձգտելով խրախուսել Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում գտնվող տնտեսվարող սուբյեկտների և կազմակերպությունների միջև համագործակցությունը, համոզված լինելով, որ կողմերի միջև համագործակցությունը մեծ հնարավորություններ կստեղծի Ռուսաստանի Դաշնության Լենինգրադի մարզի և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի զարգացման համար, համաձայնության եկան հետևյալի շուրջ՝

ՀՈԴՎԱԾ 1.

Աույն Համաձայնագրի շրջանակներում կողմերը համագործակցում են ՌԴ և ՀՀ ազգային օրենսդրություններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 2.

Կողմերը զարգացնում են համագործակցությունը հետևյալ ոլորտներում՝

- Արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ և առևտուր,
- Գիտություն, տեխնիկա, կրթություն և առողջապահություն,
- Մշակույթ և արվեստ,
- Զբոսաշրջության և սպորտի զարգացում,

- Էկոլոգիա և բնական պաշարների ռացիոնալ օգտագործում,
- Տեղական ինքնակառավարում:

ՀՈԴՎԱԾ 3.

Կողմերը աջակցություն են ցուցաբերում տնտեսվարող սուբյեկտներին արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի, ժողովրդական սպառման ապրանքների և ծառայությունների մատուցման, արտադրական կոոպերացիայի և համատեղ նախագծերի և ծրագրերի ֆինանսավորման ոլորտում համագործակցության զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 4.

Կողմերը ստեղծում են նպաստավոր պայմաններ փոքր և միջին բիզնեսի զարգացմանն աջակցող ներդրումների ներգրավման և պաշտպանման համար:

ՀՈԴՎԱԾ 5.

Կողմերը կազմակերպում են տոնավաճառներ, ցուցահանդեսներ և աճուրդներ, փոխանակվում են արդյունաբերական և գյուղատնտեսական ձեռնարկությունների, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի առանձին տեսակների, ժողովրդական սպառման ապրանքների և գյուղատնտեսական արտադրանքի նկատմամբ այդ ձեռնարկությունների և բնակչության պահանջարկի մասին տեղեկավորությամբ:

ՀՈԴՎԱԾ 6.

Առևտրատնտեսական համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով Կողմերը փոխանակվում են ՌԴ Լենինգրադի մարզի և ՀՀ Արագածոտնի մարզի ձեռնարկությունների կողմից թողարկվող արտահանվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների մասին տեղեկատվությամբ:

Առանձին պայմանավորվածությունների շրջանակներում կողմերն իրականացնում են մասնագետների փոխանակում և կազմակերպում են **ստաժիրովկաներ** արտադրության կազմակերպման առանձնահատկությունների և արտաքին տնտեսական գործունեության պայմանների ուսումնասիրման նպատակով:

ՀՈԴՎԱԾ 7.

Կողմերն աջակցում են գիտատեխնիկական և այլ բնույթի հետազոտությունների, հրապարակումների և տեղեկատվության արդյունքների փոխանակմանը, մասնակցում են համատեղ սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների անցկացմանը:

ՀՈԴՎԱԾ 8.

Կողմերն աջակցում են ՌԴ Լենինգրադի մարզի և ՀՀ Արագածոտնի մարզի թատրոնների, թանգարանների, ստեղծագործական կոլեկտիվների, ասոցիացիաների և ֆոնդերի միջև համագործակցությանը և ուղղակի շփումներին, գեղարվեստական ցուցահանդեսների անցկացմանը:

ՀՈԴՎԱԾ 9.

Կողմերն աջակցում են ՌԴ Լենինգրադի մարզի և ՀՀ Արագածոտնի մարզի ուսումնական հաստատություններում սովորողների և ուսանողների հանգստի կազմակերպմանը:

Կողմերը համակողմանի աջակցում են զբոսաշրջության ոլորտում գործունեություն ծավալող զբոսաշրջության գործակալների և կազմակերպությունների համագործակցությանը:

ՀՈԴՎԱԾ 10.

Կողմերն աջակցում են համագործակցության զարգացմանը տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակով, փոխանակվում են տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքային փորձով:

ՀՈԴՎԱԾ 11.

Կողմերն աջակցում են զանգվածային տեղեկատվության միջոցների համագործակցությանը, լրագրողների համատեղ սեմինարների, հանդիպումների, կոնֆերանսների անցկացմանը, տեղեկատվության փոխանակմանը:

ՀՈԴՎԱԾ 12.

Կողմերը զարգացնում են փոխադարձ համագործակցություն շրջակա բնական միջավայրի պահպանության, էկոլոգիական անվտանգության ձեռքբերման, բնական

պաշարների ռացիոնալ օգտագործման, էկոլոգիապես մաքուր արտադրանքի արտադրության ոլորտների ընդլայնման գործում:

ՀՈԴՎԱԾ 13.

Համաձայնագրի դրույթներն իրագործելու նպատակով ՌԴ և ՀՀ օրենսդրություններին համապատասխան Կողմերը կարող են կնքել համաձայնագրեր երկկողմանի համագործակցության որոշակի ուղղություններով:

ՀՈԴՎԱԾ 14.

Կողմերը մշակում և համաձայնեցնում են համագործակցության որոշակի ծրագրեր սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 15.

Կողմերը, ըստ անհրաժեշտության, անց են կացնում երկկողմանի խորհրդատվություններ և բանակցություններ սույն Համաձայնագրի և դրա հիման վրա կնքված համագործակցության այլ համաձայնագրերի, մշակված ծրագրերի և նախագծերի իրագործման հարցերով:

ՀՈԴՎԱԾ 16.

Կողմերն իրականացնում են տեղեկատվության և աշխատանքային փորձի փոխանակում սույն Համաձայնագրի առաջին հոդվածում նշված ոլորտներում, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերով:

Կողմերը ժամանակին տեղեկացնում են միմյանց ՌԴ և ՀՀ ազգային օրենսդրություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել սույն Համաձայնագրի իրագործման վրա:

ՀՈԴՎԱԾ 17.

Սույն Համաձայնագրի բոլոր փոփոխությունները կատարվում են Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և ձևակերպվում սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող արձանագրություններով:

ՀՈԴՎԱԾ 18.

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կիրառման առնչությամբ տարաձայնությունները ենթակա են կարգավորման Կողմերի միջև խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 19.

Սույն Համաձայնագիրը կնքվում է 3 /երեք/ տարի ժամկետով: Համաձայնագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ ժամանակահատվածով, եթե Կողմերից ոչ մեկը երեք ամիս առաջ մինչև համապատասխան ժամեկտի լրանալը մյուս կողմին գրավոր չի ծանուցել սույն Համաձայնագրի դադարեցման իր մտադրության մասին:

Սույն Համաձայնագրի դադարեցումը չի ազդում Կողմերի կողմից սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան համաձայնեցված և մինչև դրա դադարեցումը չավարտված նախագծերի և ծրագրերի կատարման վրա, եթե Կողմերը գրավոր այլ բան չեն պայմանավորվել:

ՀՈԴՎԱԾ 20.

Սույն Համաձայնագիրը օրինական ուժ է ստանում Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական **ընթացակարգերի** կատարման մասին Կողմերին գրավոր ծանուցման ամսաթվից:

Կազմվել է _____ քաղաքում, 2011թ-ի _____ին, երկու օրինակից, յուրաքանչյուրը՝ ռուսերեն և հայերեն լեզուներով, ընդ որում՝ տեքստերից յուրաքանչյուրն ունի իրավական ուժը:

ՌԴ Լենինգրադի մարզի
կառավարության անունից

Լենինգրադի նահանգապետ

Վ.Պ.Սերդյուկով

ՀՀ Արագածոտնի
մարզի անունից

Արագածոտնի մարզպետ

Ս.Ա.Սահակյան

